

Կ-874-19.10.2015-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՍԱՀՄԱՆԱՄԵՐԶ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-156-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագրից և ամբողջ տեքստից հանել «գյուղական» բառը:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետի «բ.» ենթակետում «ավելացված արժեքի հարկից» բառերից հետո լրացնել «, եթե Ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով իրենց գրանցման վայրի հարկային մարմին չեն ներկայացրել սույն ենթակետով նախատեսված արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն» բառերը,

2) լրացնել նոր մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«Ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող՝ օրենքով սահմանված կարգով ավելացված արժեքի հարկ վճարող համարվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը կարող են հրաժարվել սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ.» ենթակետով նախատեսված արտոնությունից իրենց գրանցման վայրի հարկային մարմին վերադաս հարկային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ձևով արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքում՝ հայտարարությունը ներկայացնելու օրվան հաջորդող օրվանից:

Արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքում ավելացված արժեքի հարկ վճարող համարվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն արտոնությունից հրաժարվելու օրն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանում կարող են հաշվանցել Ցանկում ներառված սահմանամերձ համայնքներում իրականացվող գործունեության հետ անմիջականորեն կապված՝ մինչև արտոնությունից հրաժարվելու պահին առկա միայն վաճառքի նպատակով ձեռք բերված ապրանքների ապրանքային մնացորդի մասով մատակարարների կողմից տրամադրված հարկային հաշիվներում (ներմուծման դեպքում մաքսային հայտարարագրերում, իսկ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների գծով՝ ներմուծման հարկային հայտարարագրերում) առանձնացված և նախկինում չհաշվանցված ավելացված արժեքի հարկի գումարները:

Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ.» ենթակետով նախատեսված արտոնությունից հրաժարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացրած կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը հետագա հաշվետու ժամանակաշրջաններում չեն կարող օգտվել նշյալ արտոնությունից:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն ներ
1	2	3	4
Ազգային Ժողովի Պատգամավոր Հովհաննես Մարգարյան	Նկատի ունենալով, որ սկսվել է համայնքների խոշորացման գործընթացը, որի արդյունքում առանձին համայնքների միավորմամբ ստեղծվում է նոր բազմաբնակավայր համայնքների, ուստի անհրաժեշտ է սահմանել նորմ, ըստ որի, եթե բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկվում է համայնք, որտեղ ըստ նշված օրենքի գործում է հարկային արտոնություններ, դրանք տարածվեն նոր խոշորացված համայնքների վրա:	Ընդունվել է ի գիտություն: Ներկայացված հարցը հնարավոր կլինի լուծել ոչ թե օրենքի, այլև ենթաօրենսդրական ակտի շրջանակներում: Մասնավորապես՝ հաշվի առնելով, որ համայնքների խոշորացման գործընթացի արդյունքում կարող է նաև համայնքների անվանափոխություն լինել, անհրաժեշտ կլինի համապատասխան	

		փոփոխություններ իրականացնել ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված համայնքների ցանկում՝ ներառելով նաև միավորված համայնքները իրենց ամբողջական վարչական տարածքով: Մինչդեռ սույն օրենքով նշված նորմի սահմանումը ներկա պահին տարընթերցման տեղիք կտա՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ խոշորացման գործընթացը դեռևս ավարտված չէ:	
--	--	--	--